Դրամաշնորհային աջակցություն «Մարդկային անվտանգության ծրագրերի» համար ՖՏ 2025
«Արմավիր համայնքում կրթական գույքի տրամադրման ծրագրի» ստորագրման արարողություն

Երևան՝ 12 մարտի, 2026թ.

Մարտի 12-ին Վաղարշապատի համայնքապետարանում (Արմավիրի մարզ) տեղի ունեցավ «Արմավիր համայնքում կրթական գույքի տրամադրման» ծրագրի (մինչև 93,567 ԱՄՆ դոլար) դրամաշնորհային աջակցության պայմանագրի ստորագրման արարողությունը: Արարողությանը ներկա էին Հայաստանում Ճապոնիայի դեսպանատան խորհրդական տիկին Յոկո Անազավան, Վաղարշապատ համայնքի ղեկավարի տեղակալ պարոն Լյուդվիգ Յայլոյանը, Արմավիրի մարզի կրթության, սպորտի և մշակույթի վարչության պետ տիկին Սոնյա Բուդաղյանը, «Լիդինգ Չենջ» ՀԿ-ի նախագահ տիկին Անի Կարապետյանը, ինչպես նաև դպրոցների ներկայացուցիչներ::

Ծրագրի նպատակն է բարելավել 2409 աշակերտների, այդ թվում՝ Լեռնային Ղարաբաղից տեղահանված 286 անձանց, և 358 ուսուցչական անձնակազմի ուսումնական միջավայրը՝ Արմավիր համայնքի 10 միջնակարգ դպրոցներին տրամադրելով կրթական սարքավորումներ (1135 աթոռ, 500 սեղան, 80 գրապահարան և 135 գրատախտակ): Դպրոցներում կրթական սարքավորումները չէին թարմացվել ավելի քան 20 տարի, և հաճախակի էին լինում դեպքեր, երբ աշակերտները հին գույքի պատճառով անհարմարությունների էին բախվում, ընդհուպ մինչև վնասվածքներ ստանում: Բացի այդ, Լեռնային Ղարաբաղից տեղահանված անձանց հոսքը մեծացրել է դպրոցների բեռը, հետևաբար, անվտանգ ուսումնական միջավայրի ապահովումը դարձել էր հրատապ հարց:

«Լիդինգ Չենջ» ՀԿ-ի Նախագահ Անի Կարապետյանը երախտագիտություն հայտնեց՝ ասելով. «Ճապոնիայի կառավարության աջակցությամբ մենք կարողանում ենք Արմավիր համայնքի երեխաներին ապահովել անվտանգ ուսումնական միջավայրով: Մենք կստանձնենք տրամադրված սարքավորումների պատշաճ պահպանման և կառավարման պատասխանատվությունը, որպեսզի համայնքի երեխաների կրթական միջավայրը պաշտպանված լինի առաջիկա տարիների ընթացքում»: Խորհրդատու Անազավան նույնպես ելույթ ունեցավ՝ ասելով. «Այս նոր սեղաններն ու աթոռները օգտագործող աշակերտներին խնդրում եմ ջանասիրաբար սովորել դպրոցում և օգտագործել այնտեղ ստացած գիտելիքները՝ օգնելով նրանց, ովքեր դեռևս հնարավորություն չեն ունեցել սովորելու: Մենք հույս ունենք, որ Արմավիր համայնքի երեխաները կնվիրվեն իրենց ուսմանը, և որ այս համայնքը կշարունակի աճել և բարգավաճել»::

Դրամաշնորհի ստորագրման արարողություն

Խորհրդական Անազավան շնորհավորական խոսք է ուղղելիս

Վաղարսապատ համայնքի ղեկավարի տեղակալ պարոն Յայլոյանը շնորհակալական խոսքով հանդես եկավ

Շահագրգիռ կողմերի լուսանկար

(աջից՝ խորհրդական Անազավա, Համայնքապետի տեղակալ Յայլոյան, կրթության, սպորտի և մշակույթի վարչության պետ Բուդաղյան և ՀԿ նախագահ Կարապետյան)